Հռովմ արձակիլ 'ի բանադրանաց քահանայի գեղջ իւրոյ, որպէս պատմի 'ի Յայսմաւուրս և 'ի հին Տօնականս. և գիւղն այն կոչի Գոմ Բիթայրէ, և վիճակն ԿՈՓՈՎԻՏ և ԱՍՊԱԳՈՒՆԻՔ: — Ի հարաւոյ սորա և բովանդակ Մշոյ գաւառին կան ԶԵՐԵԳՈՒՆՈՒ վիճակն և ԽԻԶԱՆ 'ի հարաւոյ Բաղիշոյ, համանուն աւանաւ. և ՇԻՐՈՒԱՆ 'ի մէջ հարաւոյ Նորա, յորում նշանաւոր է Շիրվան գալէի բերդ:

76. Յարևելից հիւսիսոյ վիճակաց և յարևմտից Ծովուն Վանայ՝ կայ անուանի գաւառն ԲԱՂԻՇՈՒ, յանուն քաղաքին որ և ՊԻԹԼԻՋ կոչի առ համանուն գետով, 'ի բարձու 4837', 'ի կիսոյ երից ձորոց՝ որոց վտակք օժանդակեն զՏիգրիս, և 'ի հնումն կոչէին ԾԱՂՈՑ-ՁՈՐ, որ է գաւառ Աղձնեաց. քարաշէն են տունք և այլ շինածք քաղաքին և կամուրջք, և զուարճատես գրիւք և պարտիզք, առողջաւուն օդով և ջրով. ունի բերդ ամուր 'ի բարձու, այլ խանդարեալ և ամայի, մկիսթ հոյակապ առ նմին և կարաւանատունք, տպարանք վիճակապետին՝ որ է պէկ, կան 'ի կոհակ մի լերին 'ի միջավայրի արևելեան ձորոյն, իբրև 280' բարձր քան զքաղաքն, դիտակ տեսարանաւ: Վաճառք քաղաքին են կտաւք և խաղտս, ցքի, ծխախոտ, խէժ և պտուղք: Բնակիչք 3 կամ 4,000 տուն, յորս 800 Հայոց, որոց են ջրոք եկեղեցիք 'ի քաղաքին, և ջրոք արտաքոյ 'ի մենաստանս, որ են Ամրոցու վանք, խնդրակապար Աստուածածին, Աղիքու Աստուածածին և Գոմոյ կամ Տպրոնաց Աստուածածին. առաջինն՝ որ տուգաբանի Ամլորգեոյ վանք, այսինքն Յովհաննու կարատեսի, պայծառացաւ վարժարանաւն յելս ԺԶ և 'ի ԺԻ դարու, և յեկեղեցւոջ նորա մեծի հանգչին Վարդան և Բարսեղ գիտնական վարդապետք: — Ի գիւղորայս Բաղիշոյ՝ որ համարին 80իս չափ, նշանաւորք են Ծապոխոր ցրտաբուխ աղբերքք 'ի վիմէ: — Ամբ, յորում ուխտատեղի Ս. Յակոբայ Եղբօր տեառն: — Պօռ, առ որով վանք Ս. Յովհաննու կամ Նարեկայոյ: — Խուլիկ աւան մեծ 400 հայ տամբք: — Ծաղոր ապառաժ յարևմտից Ամպայ, ընդ որ բացեալ կայ հուն անցի կարավանին իբր 20' ընդ երկայն: — Ի հիւսիսոյ քաղաքին ձգի Ռահվայ ձորահովիտ ընդ արևմուտս 'ի Մուշ, ընդ որ անցանէ կարավանն. և լինի 'ի նմա բուք ձեան անհնարին, վասն որոյ ելեւանս քարաշէնս շինեալ է անդ, յորս նշանաւոր է կոչեցեալն Ալամշ յարևելակողմն:

Յելից Բաղիշու ընդ մէջ Ծովուն և Խիզնայ կան ՏԱՏԻԿ և ԿԻՒԶԷԼՏԷՐԻ փոքր վիճակք, առաջինն կրէ զանուն միոյ 'ի գաւառացն Աղձնեաց, որոյ գլխաւոր տեղի լեալ Թուի Դպրոնն աւան յարևմտեան Ծովեղեր Վանայ և նուաւահանգիստ վաճառաբարձ նաւուց:

77. Ի հիւսիսոյ Բաղիշու և 'ի Ռահվայ ընդ արևմուտս մինչև 'ի Վարդոյ ձգեալ տարածանի գաւառն և վիճակ ՄԸՈՑ, որ է ՏԱՐՕՆ գաւառ հին, 'ի հարաւոյ ունելով զՍԻՄ լերինս Սասնոյ, Խուլփայ և Խուլթայ, 'ի հիւսիսոյ զՊուլանուխ և զԽնուս վիճակս. Մուրատ յարևելից իջեալ անցանէ ընդ գաւառն ընդունելով յայմէն զՀարդոհոր որ 'ի Պինկիջլի գայ, և զկինձ՝ որ 'ի բարձանց քարաժեռից անկանի 'ի նա, և յահեկէ զՄեղրագետ որ և Գարասու՝ որ 'ի ՆԵՄՐՈՒԴ լերին բղխէ: Հարթածաւալ բարձրաւանդակ է գաւառն Մշոյ 3,500–4,000' բարձր, և ՁՈՒԽՈՒՐ կոչի արևելակողմն. քաղ մշակեալ և յոյժ բարեբեր է, անուշահոտ և քաղցրաջուր ըստ հին նկարագրին Զենովբայ. նշանաւոր ևս է ամենաղան յիշատակաբար կրօնական, ուսումնական և արիական հանդիսից նախնեաց մերոց, և մանաւանդ Թարգմանչացս և տանն Մամիկոնենից: — Գլխաւոր տեղի գաւառին է ՄՈՒՇ քաղաք յարևմտակողմն, 'ի սաստրոտս Սիմ անուանեալ լերանց 'ի նախնեաց, որ և Տաւրոսական լերինք ըստ նոցա. առ ձորաբերանով, բլուր 'ի միջի ունելով և բերդ աւերակ, և առ վտակաւ օժանդակաւ Մեղրայ. չիք նմա շինուած նշանաւոր և ոչ ճարտարութիւն աբուբեսոյց քաղաքին, որոյ վաճառք են արգասիք երկրին, մեղր, գազպէ, ծխախոտ, ջամիչ, գինի, և այլն: Բնակիչք իբրև 8,000. յորս 700 տունք են Հայոց արևելեայց և հռովմէականաց, և հինգ եկեղեցիք: Եւ 'ի 100իս չափ գիւղորայս Մշոյ են իբրև 22,000 ոգիք Հայք. այլ բնակիչքն Քուրդք են շինակեցք:

78. Նշանաւոր տեղիք Մշոյ են 'ի հարաւոյ Մեղրագետոյ. յելից քաղաքին Մոխոնք գիւղ, և մերձ նմին 'ի լերինն Աղբիբերդ (Ասողկանբերդ) և Կոսոտոր բերդ: — Երկիժամու յելից հարաւոյ քաղաքին կայ Առաքելոց վանք անուանի որ և Ղազարու վանք, առ ոտամբ ԾԻՐՆԿԱՏԱՐ լերին. տաճար եկեղեցւոյն շինեալ է 'ի Լուսաւորչէն և ամփոփեալ ընդ բեմիւն զնշխարս Առաքելոց. յարևելից պարսպաց վանացն կան խաչաթոռք արձանք գերեզմանաց Թարգմանչացն Դաւթի Անյաղթի, և այլոց ոմանց: Առաջնորդի վանացս Թեմ են գիւղորայք հարաւոյ Մեղրագետոյ. յորոց մի է և Խոսոյնց աւանագեղ, և Նորշէն կամ Գոնէն-Նորշէն վասն բնակչացն հռովմէականս գոլոյ, 'ի հիւսիսոյ վանացն. կայ և Քուրդ-Նորշէն հեռագոյն ընդ մէջ Գրգռոյ և Նեմրուտայ: Յարևմտից քաղաքին 'ի նմին կողման գետոյն կան Խրօնք և Խրնի գեղք, յառաջնոյն ծագեցաւ մեծն Մովսէս քերդողահայր և պատմահայր մեր. երկրորդն Թուի Հոռնոս աւան շինեալ 'ի հնդկաղարմ քրմաց Դեմետրի և Գիսանեայ: Մերձ սոցա 'ի լերին կայ Ս. Յովհաննէս Եղբրոտի վանք շինեալ 'ի Լուսաւորչէն, յորում պահիւք շէջ իւղոյն որով Տէրն մեր օծաւ, և աջ Արեմաթացւոյն: — Իսկ 'ի հիւսիսակողմն կամ յայմմէ Մեղրագետոյ կայ Խոսրի կամ Հայրի գիւղ, հայրենիք մեծին Մեսրովպայ հեղինակի տառիցս և հօր հայերէն գպրութեանց. — Առիւ, Քրտագոմ, Վարդենիս, և այլն:

79. Այս ամենայն յահեկէ և 'ի հարաւոյ Արածանւոյ կայ. իսկ յայմմէն որ է արևմտեան հիւսիսային և լեռնային մասն վիճակին՝ նշանաւոր տեղիք են Ս. Կարապետ 'ի ծայրս սահմանաց Մշոյ վեց ժամաւ հեռի, 'ի սահմանակցութեան Վարդոյ, 'ի Քուրէ լերին իբր 6000' բարձր. անուանի ուխտատեղի Հայոց. որ 'ի Թուրքաց Զանլը-փիլոն կոչի վասն զանգակատանն, կառուցեալ Յիննանեան տեղիս պաշտամանց դիցն Հնդկահայոց, զորս ջնջեալ Լուսաւորչին՝ նը-սիրեաց զաւելս առ Ս. Կարապետն, առաջնորդ վանացն կարգեալ զասորին Զենոբ Գլակ, վասն որոյ